

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԱՂԻԲԵՋԱՆԻ ՎԱՐԱԾ ԲՈՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

(1923-91թթ)¹

Սարգիս Ասատրյան

ԱրՊԳ ասպիրանտ

Ժողովրդագրության զարգաման օրինաչափությունների դրսևորման ուղղությունների, միտումների, վերաբնակեցման և տարաբնակեցման քաղաքականության, ինչպես նաև բնակչության աճի գործոնների դերի բացահայտման ու գնահատման հիման վրա կարելի է ուրվագծել և ընդհանուր առմամբ կանխատեսել Լեռնային Ղարաբաղի բնակչության ժողովրդագրական պատկերը երկարատև հեռանկարի տարբեր փուլերի համար: Հետևաբար ԼՂՀ պատմության համար նշանակալից ժամանակահատվածի (1923-91թթ.) բազմակողմանի ուսումնասիրումը չի կարող իրականացվել՝ առանց ժողովրդագրական գործընթացների համակողմանի հետազոտման:

Ընդհանուր առմամբ՝ բնակչության զարգացման օրինաչափությունները ձևավորվում են բուն ժողովրդագրական գործընթացների՝ պատմականորեն հանդես եկող ու տվյալ պահին ինքնուրույն գործող երևույթների և հասարակության սոցիալ-տնտեսական պայմանների ազդեցության ներքո: Յուրաքանչյուր տվյալ պահին ծննդի, մահվան, ընտանիքի մեծության ու գաղթի ընթացքի վրա մեծապես ազդում է բնակչության տարիքային կազմը, որը գոյանում է պատմական զարգացման ընթացքում հասարակության սոցիալ-տնտեսական կյանքում տեղի ունեցող փոփոխություններին և տեղաշարժերին համընթաց, ինչպես նաև արտակարգ երևույթների (պատերազմ, բնական աղետներ, տարափոխիկ հիվանդություններ և այլն) հետևանքով: Եվ եթե վերջինիս էլ գումարենք այն հանգամանքը, որ արցախահայությունը ԱդրիսՍՀ-ի կազմում յոթանասուն տարիների ընթացքում ենթարկվել է խորհրդա-ադրբեջանական տարաբնույթ բռնաճնշումների, ապա պատկերը ավելի ընդհանրական կդառնա:

Հատկանշական է այն փաստը, որ Ղարաբաղյան շարժման նախորդող և հաջորդող տարիներին Ադրբեջանը, պետական մակարդակով օգտագործելով բոլոր հնարավոր տարբերակները, ԱդրիսՍՀ-ում և ԼՂԻՍ-ում արցախահայության դեմ իրականացնում էր էթնիկ գտման քաղաքականու-

¹ Հոդվածն ընդունված է 21.12.13:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊԳ պատմության ամբիոնը:

թյուն, որն էլ հանգեցնում էր երկրամասի հայաթափմանը և ժողովրդագրական պատկերի թուրքացմանը: Ուստի Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ազգային իրավունքները ոտնահարելու և նրա նկատմամբ խտրական քաղաքականություն կիրառելու իմաստը Լեռնային Ղարաբաղը հայաթափ անելու և մարզը ադրբեջանականացնելու մեջ էր¹:

Եվ եթե անդրադարձ կատարենք ԼՂԻՄ-ի ժողովրդագրական գործընթացների պատմությանը, ապա կտեսնենք, որ դրանք Ղարաբաղում՝ Խորհրդային կարգերի հաստատման առաջին մի քանի տարիներին, ինչ-որ չափով նպաստեցին բնակչության ընդհանուր թվաքանակի կայունացմանը և ավելացմանը, որը, թեպետ, հիմնականում տեղի էր ունենում բնական աճի շնորհիվ: Սակայն Լեռնային Ղարաբաղի ԱդրԽՍՀ-ի կազմի մեջ մտնելուց հետո սկիզբ է առնում նրա հայ բնակչության արտագաղթը, որը հանգեցրել է մարզի հայ բնակչության կշռի անընդհատ նվազմանը: Այսպես՝ եթե 1921 թվականին հայերը կազմում էին երկրամասի բնակչության 94.4 տոկոսը, ապա 1930 թվականի տվյալներով՝ այդ ցուցանիշը կազմեց 83.1 տոկոս²: 1923 թվականին, երբ ձևավորվեց ԼՂԻՄ-ը, երկրի բնակչությունը կազմում էր 157.3 հազար մարդ, որից՝ 149.6 հազար հայեր և 7.7 հազար ադրբեջանցիներ: Ինչպես երևում է տվյալներից՝ հայերը կազմում էին բացարձակ մեծամասնություն:

Եթե նախախորհրդային ժամանակաշրջանում Ղարաբաղի բնակչության զգալի մասը (աշխատունակ, ընտանիքի հայր հանդիսացող երիտասարդ տղամարդիկ) մեկնում էին հեռավոր վայրեր աշխատելու, ապա խորհրդային իշխանության, ադրբեջանական գաղութատիրության տարիներին մարզերից մեկնում էին հիմնականում չամուսնացած երիտասարդները՝ սոցիալ-տնտեսական տարրական պայմանների բացակայության պատճառով: Մեխանիկական շարժերի համանման տենդենցները պայմանավորեցին բնակչության «ծերությունը» և դրա հետևանքով ծնելիության մակարդակի կտրուկ նվազումը և մահացության մակարդակի բարձրացումը:³

1926 թվականին գյուղական բնակչության ծնելիությունը հասավ 4.3 տոկոսի, մահացությունը՝ 1.5 տոկոսի: Բնակչությունը աճեց 2.8 տոկոսով: Ազգաբնակչության 90 տոկոսը /112686 հոգի/ հայեր են, 9.6 տոկոսը՝ /12006 հոգի/ ադրբեջանցիներ, 0.3 տոկոսը՝ ռուսներ և 0.1 տոկոսը՝ այլ ազգի ներկայացուցիչներ: 1923-1979 թվականներին մարզի գյուղական

¹ Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Երևան, 1991, էջ 61:

² Народное хозяйство СССР за 70 лет, Москва, 1987, с. 405.

³ Нагорный Карабах. Историческая справка. Ереван, 1988, с. 46-47.

բնակչությունը կրճատվեց 61.3 հազարով՝ առավելապես հայկական բնակչության հաշվին: Վերացան մի քանի տասնյակ գյուղեր:¹ Խորհրդային ազգագրագետ Ն.Գ.Վոլկովան այդ կապակցությամբ գրել է. «Գյուղերը, որտեղ ապրում էին հայերը, հայաթափվեցին և բնակեցվեցին ադրբեջանցիներով: Հայկական բնակչությունը ողջ մնաց միայն այն տեղերում, որտեղ մուսավաթները ոտք չեն դրել»:²

1926-1939 թվականների մարդահամարների ժամանակաընթացքում, Ադրբեջանում հրատարակված վիճակագրական տվյալներով, մարզում հայ բնակչությունը ավելացավ 18.9 տոկոսով, այսինքն՝ 1926 թվականի 111.7 հազարից 1939 թվականին հասավ 132.8 հազարի:³ Իսկ ադրբեջանական բնակչությունը ավելացավ 11.9 տոկոսով:⁴

1939 թվականի հունվարի 17-ին մարզում անցկացվեց բնակչության նոր հաշվառում: Մարդահամարի տվյալներով՝ ԼՂԻՄ-ի ընդհանուր բնակչությունը կազմել է 150.8 հազար մարդ⁵, որից 132.8 հազարը՝ հայեր, 14.1 հազարը՝ ադրբեջանցիներ, 3.2 հազարը՝ ռուսներ, 0.7 հազարը՝ մյուս ազգությունները:⁶

ԼՂԻՄ-ի բնակչության թիվը և ազգային կազմը 1939 թվականի մարդահամարի տարիներին

Աղուսյակ 1 Ազգություններ	Բնակչության թիվը	Տոկոսներով
Հայեր	132.8	88.0
Ադրբեջանցիներ	14.1	9.1
Ռուսներ	3.2	2.1
Մյուս ազգություններ	0.7	0.4
Ընդամենը	150.8	100

7

¹ Սեյրան Գ., Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները, Երևան, էջ 8-9:

² Кавказский этнографический сборник, т. 4, Москва, 1969, с.10.

³ Всесоюзная перепись населения 1959 г. Азербайджанской ССР, Москва, 1963, с. 140.

⁴ Тер-Саркисянц, А.Е., Некоторые тенденции этнокультурного развития армян Нагорного Карабаха, Լրաբեր հասարակական գիտությունների, հ.8, Երևան, 1988, էջ 15:

⁵ Նույն տեղում:

⁶ ԼՂՀ պետարխիվ, ֆ. 142, ց. 1, գ. 9, թ. 2:

⁷ Нагорный Карабах. Историческая справка, Ереван, 1988, с. 47.

Աղյուսակ 2

Շրջաններ	Բնակչությունը	Հայեր	Ադրբեջանցիներ	Ռուսներ
Մարտակերտի	40812	36453	2833	1244
Մարտունու	32398	30235	1501	457
Ստեփանակերտի	29321	26881	2014	563
Շուշիի	10818	4177	6306	256
Հադրութի	27128	25975	727	349

1

Ինչպես երևում է տվյալներից՝ մարզի հինգ շրջաններից ադրբեջանցիները մեծամասնություն են կազմել Շուշիի շրջանում: 1939 թվականին Շուշիի շրջանի բնակչությունը կազմել է 10818 մարդ, որից ադրբեջանցիները՝ 6306 մարդ կամ 58.3 տոկոս և հայերը՝ 4177 մարդ կամ 38.6 տոկոս: Ընդ որում՝ ադրբեջանցիներից շատերը ապրել են Շուշի քաղաքում, որի բնակչությունը 5424 մարդ էր, իսկ շրջանի գյուղական վայրերում հայերը կազմել են մեծամասնություն:²

Արցախահայությունը մեծ կորուստներ ունեցավ նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Մինչ պատերազմը մարզի 51 տոկոսը կամ 76745 մարդ կազմել են տղամարդիկ, իսկ 74092 մարդ կամ 49 տոկոսը կանայք էին: Սակայն այդ ցուցանիշը փոխվեց պատերազմից հետո: 1959 թվականին կանայք կազմեցին բնակչության 53 տոկոսը կամ 68735 մարդ, իսկ տղամարդիկ՝ 49 տոկոս կամ 61671 մարդ:³ Ռազմաճակատ ուղարկված տղամարդկանց մի մասը մնացին ռազմի դաշտում՝ իրենց կյանքը զոհաբերելով հանուն հայրենիքի փրկության, իսկ մյուս մասն այլևս չվերադարձավ հայրենիք՝ տեղափոխելով նաև ընտանիքի մյուս անդամներին: Ռազմաճակատ ուղարկվեցին նաև կանայք /2000/, սակայն կանանց զոհերը քիչ էին, քանի որ նրանցից շատերը չէին մասնակցում ռազմական գործողություններին, այլ ցուցաբերում էին բուժօգնություն և այլ ծառայություններ էին կատարում:⁴

¹Մելիք-Շահնագարյան Լ., Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Երևան, 1998, էջ 5:

²Достижения Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах. Статистический сборник, Степанакерт, 1963, с.30.

³Достижения Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах. Статистический сборник, с. 31.

⁴Мирзоян Б., Нагорный Карабах (Размышления над статистикой), Լրաբեր հասարակական գիտությունների, հ.7, Երևան, 1988, էջ 44:

Ընդհանրապես, Երկրորդ Համաշխարհային պատերազմը խոր հետք թողեց արցախահայության ժողովրդագրական պատկերի վրա: Համեմատելու համար նշենք, որ միայն ԼՂԻՄ-ից մոբիլիզացվեց և ռազմաճակատ ուղարկվեց 45 հազար ղարաբաղցի /կամ բնակչության 32 տոկոսը/, դա այն դեպքում, երբ ռազմաճակատ ուղարկված ադրբեջանցիների թիվը կազմել է ընդամենը տոկոս՝ չնայած ընդհանուր թվաքանակում կազմում էին մարզի բնակչության 10 տոկոսը:

Սակայն մարզի հայ ժողովուրդը առավել ծանր կորուստներ կրեց հետպատերազմյան հետագա տասնհինգ տարիների ընթացքում՝ ընդհուպ մինչև 1959 թվականը: Այդ տարիներին ԼՂԻՄ-ի բնակչությունը բավականին կրճատվեց. ավելի քան 30 հազար ղարաբաղցի լքեց մարզը, իհարկե, ոչ ինքնակամ:¹

1959 թվականի հունվարի 15-ին Լեռնային Ղարաբաղում անց կացվեց բնակչության նոր հաշվառում: Մարդահամարի տվյալներով՝ մարզի ողջ բնակչությունը կազմել է 130.406 մարդ², որից 110.053-ը կամ 84.4 տոկոսը՝ հայեր, 17.995-ը կամ 13.8 տոկոսը՝ ադրբեջանցիներ, 1790 մարդ կամ 1.37 տոկոս ռուսներ, 0.5 հազարը՝ այլ ազգերի ներկայացուցիչներ:³

1950-1960-ական թվականներից աճեց բնակչության արտահոսքը դեպի Հայաստանի Հանրապետության տարածք՝ Երևան, Կապան, Գորիս, Քաջարան և այլն: Դեպի Հայաստանի Հանրապետության բնակչության արտահոսքի ուղիներից մեկն էլ հանդիսանում էր այն, որ երիտասարդներից շատերը, սովորելու գնալով նրա բուհերում և մասնագիտական ուսումնական հաստատություններում, այլևս հետ չէին վերադառնում: Մինչդեռ տեղում մասնագետների կարիքը լրացնելու համար շատ դեպքում գործուղվում էին Բաքվից՝ գլխավորապես ադրբեջանցիները:

Հայ ժողովրդի արտագաղթը բացասական ազդեցություն է թողնում հայկական ընտանիքների չափերի, բնակչության արագ ծերացման վրա: Այդ տարիներին բնակչության տարիքային կազմում կտրուկ նվազել է երիտասարդների թիվը, և աճել տարեց մարդկանց թիվը: Դա վկայում է այն մասին, որ մահացության թիվը գնալով ավելի էր մեծանում, քան ծնելիության չափը:

1970 թվականի հունվարի 15-ին ԼՂԻՄ-ում անցկացվեց բնակչության նոր հաշվառում: Մարդահամարի տվյալների համաձայն՝ մարզի ընդհանուր բնակչությունը կազմել է 150.3 հազար մարդ, որից 121.1 հազա-

¹ Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, Երևան, 2002, էջ 286:

² Народы Кавказа, т. 1, Москва, 1960, с.20.

³ <http://census.stat-nkr.am/>

րը կամ 80.4 տոկոսը՝ հայեր,⁴ 27.2 հազարը կամ 18.1 տոկոսը՝ ադրբեջանցիներ, 1.3 հազարը կամ 0.9 տոկոսը՝ ռուսներ, 0.7 հազարը կամ 0.5 տոկոսը՝ այլ ազգերի ներկայացուցիչներ:¹

Ընդամենը տասնմեկ տարվա ընթացքում (1959-1979 թթ.) հայերի թիվը 84.4 տոկոսից հասավ 80.6 տոկոսի, իսկ ադրբեջանցիների թիվը 18.0 հազարից հասավ 27.2 հազարի կամ ավելացավ 4.3 տոկոսով:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ 1939-1979 թվականներին բավականին բարձր բնական աճի պայմաններում մարզի հայ բնակչությունը կրճատվել է մոտավորապես 10 հազարով:² 1926-1979 թվականների միջև ընկած ժամանակահատվածում ԼՂԻՄ-ում հայկական բնակչությունը աճել է ընդամենը 10.2 տոկոսով, իսկ ադրբեջանականը՝ համարյա 3 անգամ ավելի, դա այն դեպքում, որ 1926 թվականին հայերը կազմել են 89.1 տոկոս, իսկ ադրբեջանցիները՝ 10.1 տոկոս:³ Այդպիսի արդյունքները մարզից հայ բնակչության արտահոսքի և ադրբեջանցիների մշտական հոսքի հետևանքներն էին: Բնակչության թվաքանակի և կազմի նմանօրինակ փոփոխությունները շարունակվեցին նաև հետագա տարիներին՝ ընդհուպ մինչև 1988 թվականը: Հատկանշական է նաև այն փաստը, որ 1921թ. տվյալներով՝ այլ էթնիկ խմբերը կազմել են Ադրբեջանի բնակչության 15%-ը կամ 266.7 հազար մարդ, և հաշվի առնելով նրանց աճի տեմպերը՝ այդ էթնիկ խմբերի թվաքանակը 1980-ականների սկզբին պետք է անցներ մեկ միլիոնից: Սակայն 1979թ. այդ բոլոր էթնիկ խմբերի թվաքանակը կազմում էր ընդամենը 57.1 հազար մարդ կամ 0.9%, և մարդահամարների արդյունքների հրապարակման ժամանակ դրանք ընդգրկվեցին «այլ ազգություններ» կարգում:

1989 թվականի հունվարի 12-ին ԼՂԻՄ-ում անցկացվեց բնակչության նոր հաշվառում:

Մարդահամարի տվյալներով՝ մարզի բնակչությունը կազմել է 189.1 հազար մարդ, որից 145.5 հազարը կամ 76.9 տոկոսը հայեր էին,⁴ 40.7 հազարը կամ 21.5 տոկոսը՝ ադրբեջանցիներ, 1.9 հազարը կամ 1.0 տոկոսը՝ ռուսներ և 1.0 հազարը կամ 0.5 տոկոսը կազմել են այլ ազգերի ներկայացուցիչներ:⁵ Ինչպես երևում է տվյալներից՝ տասը տարվա ընթացքում (1979-1989 թթ. մարդահամարների ընթացքում) մարզի բնակչու-

¹ НКАО 50 лет в дружной советской семье (1923—1973), Степанакерт, 1973, с. 17.

² Նըվ. աշխ., էջ 45:

³ Մելքունյան Ս., Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան, 2005, էջ 53:

⁴ Խորհրդային Ղարաբաղ, 20 հունվարի, 1989:

⁵ СССР в цифрах, Тифлис, 1926, с.4.

թյունը աճել է 16.9 հազարով: Բարձրացավ նաև հայ բնակչության տեսակարար կշիռը՝ 1979 թվականին՝ 123.1 հազար մարդ, 1989թ՝ 145.5 հազար: Դա 1988 թվականի Սումգայիթյան և նրան հաջորդած դեպքերի հետևանքն էր: Ադրբեջանական հայաշատ վայրերից փախստական հայերի որոշ խումբ բնակություն հաստատեց ԼՂԻՄ-ում՝ իր նախկին բնակավայրերում: Այդ պատճառով է 1989 թվականի մարդահամարի տվյալներով մարզի հայ բնակչության տեսակարար կշիռը փոքր-ինչ բարձրացավ:¹ Ասենք, որ մարդահամարից հետո այդ տոկոսը անկում է ապրել մարզում ադրբեջանցիներով բնակեցված շրջաններում ինտենսիվ բնակարանաշինարարություն իրականացնելու և ադրբեջանցիներով բնակեցնելու հետևանքով:⁶ Հասկանալի է նաև այն պարզ իրողությունը, որ «հայկական հատվածը» ԱդրԽՍՀ և Ադրբեջանական Հանրապետության բնակչության միակ հատվածը չէ, որի հաշվին տասնամյակներ շարունակ իրականացվել է հանրապետության բնակչության «թյուրքացման» քաղաքականությունը: Այս առումով հատկանշական է ԱդրԽՍՀ և Ադրբեջանական Հանրապետության թալիշների մասին պաշտոնական տվյալների պատմությունը:²

1989 թվականի մարդահամարն անցկացվել է դարաբաղյան հակամարտությունը սկսվելուց մեկ տարի անց՝ Սումգայիթում, Կիրովաբադ-Գյանջայում և այլ բնակավայրերում հայկական ջարդերից հետո, ջարդեր, որոնք սադրել են հայերի զանգվածային հեռացումը Ադրբեջանից: Ուստի չի կարելի ճշգրիտ համարել այդ հաշվառման արդյունքները, որոնցում նշված են 390.505 հայեր Ադրբեջանում: Սա են վկայում նաև ադրբեջանական աղբյուրները: Ուշագրավ է, որ «խաղաղ» 1979 թվականին մարդահամարն Ադրբեջանում «հայտնաբերել է» 475.486 հայեր:³

Խոսելով ԼՂԻՄ-ում բնակչության տարաբախշման մասին՝ պետք է նկատել, որ 1989 թվականին տվյալներով՝ բնակչության խտությունը կազմում էր 42.7 մարդ: Համեմատաբար խիտ էին բնակեցված հիմնականում նախալեռնային գոտիները, որտեղ խտությունը հասնում էր 65 մարդու: Ամենից խիտը բնակեցված էր Մարտունու շրջանը (36.2), ամենից նոսր՝ Հադրութի շրջանը (21.3 մարդ):⁴ Այսպես՝ 1979 թվականին այն կազմել է 56.8 տոկոս, իսկ 10 տարի հետո դարձավ 48.3 տոկոս: Կանանց

¹ «Խորհրդային Ղարաբաղ», 20 հունվարի, 1989:

² Марджанян А., Азербайджанская статистика о численности талышей и прочих национальностей, - В сб. Введение в Историю и Культуру Талышского Народа. Под ред. проф. Г. Асатрян, Ереванский Государственный Университет, Ереван, 2011, с. 29-36.

³ http://demoscope.ru/weekly/ssp/sng_nac_79.php?req=7

⁴ Ամիրջանյան Թ., Արզումանյան Վ., Լեռնային Ղարաբաղի աշխարհագրություն, Ստեփանակերտ, 1994, էջ 56:

տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր քանակում կազմել է 51,8 տոկոս: 1989թ. մարդահամարի տվյալներով արտադրության մեջ զբաղվածների ընդհանուր թվում բարձրագույն և միջնակարգ կրթություն ունեցողները կազմել են 70577 մարդ կամ ամբողջի 92 տոկոսը:¹

Սակայն արդարացի կլինի նշել, որ Ղարաբաղյան շարժման, ԽՍՀՄ փլուզման, Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի կողմից հրահրված պատերազմի, ԼՂՀ հռչակման հետևանքով երկրում ստեղծված միգրացիոն անվերահսկելի տեղաշարժերի, քաղաքական, սոցիալ-տնտեսական անկայուն պայմաններում 1989թ. Լեռնային Ղարաբաղում անցկացված վերջին մարդահամարի արդյունքները օբյեկտիվ պատճառներով շատ շուտ կորցրեցին իրենց արդիականությունը և, բնականաբար, չէին կարող արտահայտել ժողովրդագրական պատկերի ճշմարտացիությունը:

Ուշադրություն է արժանի այն փաստը, որ Ադրբեջանական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի հանձնման արդեն առաջին հինգ տարիներին և ԼՂԻՄ ստեղծումից 3 տարի հետո հայ ազգաբնակչության թիվը նվազել է 11-12 հազար մարդով: ԽՍՀՄ-ում անցկացված վերջին մարդահամարի (1989) տվյալներով ԼՂԻՄ-ում ապրում էր 40 հազար 600 ադրբեջանցի, այսինքն՝ ինքնավարության բնակչության ընդհանուր թվաքանակի 21,5 տոկոսը:²

Այսպիսով՝ Խորհրդային Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի գտնվելու տարիներին ադրբեջանական բնակչության տոկոսը 4,9-ից հասել է 21,5-ի (աճի տեմպը՝ 484 տոկոս), իսկ հայ ազգաբնակչության տոկոսը 94,8-ից կրճատվել է 76,9-ի:³

Անառարկելի է նաև այն հանգամանքը, որ եթե Ադրբեջանի գաղութային քաղաքականության հետևանքով Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իրավունքները ամենուրեք չոտնահարվեին, նրանք ստիպված չլինեին հեռանալ հայրենիքից, ապա ԼՂԻՄ-ի հայ բնակչության թիվը արդեն 1989թ. 189,1 հազարի փոխարեն կկազմեր շուրջ 500 հազար մարդ:

1988թ.ազգային-ազատագրական պայքարի պատճառով բնակչության կառուցվածքում հայերի տեսակարար կշիռը էապես փոխվեց: 1988թ. բնակչության թիվը կազմում էր 189 հազար մարդ, իսկ 1990թ.՝ 195,2 հազար մարդ, որի 98 տոկոսը հայեր էին:⁴ Արցախի բնակչության թվա-

¹Մելքունյան Ս., Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան, 2005, էջ 368-369:

²Մայիլյան Ս., Ստորումներ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի միջև հակամարտությունում վերադարձի և դրա այլընտրանքների մասին <http://theanalyticon.com/?p=243>

³Նույն տեղում:

⁴ԼՂՀ սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշները, 1985-1996, Ստեփանակերտ, 1998, էջ 8:

քանակի նման աճը հիմնականում պայմանավորված էր Բաքվից և Ադրբեջանի մյուս շրջաններից հայերի բռնագաղթմամբ:

Համեմատելու համար նշենք, որ եթե 1979թ. մարդահամարի տվյալներով՝ Ադրբեջանում բնակվում էին 475,5 հազար հայեր, ապա նրանցից ավելի քան 300 հազարը 1988-1990թթ. ստիպված եղավ բռնել գաղթի ճանապարհը:¹

Ցավով պետք է նկատել, որ 90-ական թվականներին բնակչության արտաքին միգրացիոն տեղաշարժերի մի մասը, գրանցման համակարգի տեսադաշտից դուրս մնալով, խեղաթյուրել է ժողովրդագրական ցուցանիշների հաշվառումը և վերլուծությունը:

Պատերազմի տարիներին տնտեսությունը կաթվածահար վիճակում էր, իսկ զինադադարից հետո, ինչպես և սպասվում էր, զարգացման խանգարիչ պատճառներից հանդիսացան մարդկային կորուստները: 1991-1994 թվականներին հազարավոր մարդկային կորուստներ եղան, որոնց գերակշիռ մասը աշխատունակ տարիքի տղամարդիկ էին: Ի դեմս նրանց՝ հասարակությունը կորցրեց և՛ սերնդատուներ, և՛ աշխատուժ: Պատերազմի ժամանակ մոտ 66000 բնակիչներ ստիպված տեղահանվեցին իրենց բնակավայրերից: Զինադադարից հետո Արցախ վերադարձավ 35000-ը: Սակայն հաշվի առնելով, որ նրանց գյուղերը կամ լրիվությամբ ավերված էին, կամ մինչ օրս էլ հակառակորդի տիրապետման տակ են՝ այդ մարդիկ դարձան տեղահանվածներ: 1988-1989 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից ներգաղթեց մոտ 23000 մարդ (Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հայ բնակչության 15.8%-ը՝ ըստ 1989 թվականի մարդահամարի տվյալների), և պետությունը կանգնեց փախստականներ ընդունելու, նրանց օթևան և ապրուստի միջոցներ տրամադրելու փաստի առջև:²

Ադրբեջանից Հայաստան փախստականների մի քանի հոսք է եղել: 20 հազարի չափ առաջին խումբը ստիպված էր փախչել 1988-ի փետրվարին՝ Բաքվի մերձակա Սումգայիթ քաղաքում տեղի ունեցած ջարդերից հետո, երբ տեղացի հարյուրավոր հայեր սպանվեցին, և հարյուրավորներն էլ վիրավորվեցին: Փախստականների երկրորդ և ավելի խոշոր ալիքը, որ ի հայտ եկավ 1988-ի երկրորդ կեսին և շարունակվեց մինչև 1989-ի վերջը, ներառեց մոտ 215 հազար փախստական: Երրորդ ալիքը (շուրջ 45 հազար մարդ) հետևանք էր 1990 թվականին Բաքվի կենտրո-

¹ Մելիք-Շահնազարյան Լ., Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Երևան, 1998, էջ 30 և 32:

² Տես՝ ԼԴՀ կառավարությանը առընթեր արխիվ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգ, 26, հունվարի 2010թ. թիվ 21 որոշում:

նական հատվածում տեղի ունեցած բռնությունների:¹

1991 թվականին «Կոլցո» օպերացիայի վերջին փուլի արդյունքում, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզին (ԼՂԻՄ) հարակից Շահումյանի շրջանի (շուրջ 12 հազար մարդ) և Գետաշենի ենթաշրջանի՝ ներառյալ Գետաշեն և Մարտունաշեն (շուրջ 5100 մարդ) գյուղերի հայաբնակ տարածքների բնակիչների մնացած մասը ևս ստիպված եղավ հեռանալ բնօրրանից:² Ըստ տարբեր աղբյուրների՝ 1990 թ. Ղարաբաղում հաստատվել էր մոտ 30.000 փախստական, իսկ զինադադարից հետո, ճշտված տվյալներով, ԼՂՀ տարածքում ապրում էր Ադրբեջանից բռնագաղթած 21.150 մարդ:³

Պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ խիստ նվազեց բնակչության բնական աճը: Այսպես՝ եթե 1993թ. 1000 բնակչի հաշվով ծնվածների թիվը կազմում էր 10,6 մարդ, ապա նույն ժամանակահատվածում մահացածների թիվը 1000 բնակչի հաշվով կազմեց 16,6 մարդ: Համեմատության համար նշենք, որ շարժման նախօրյակին Արցախում ծնվածների միջին տարեկան թվաքանակը 1000 շնչի հաշվով կազմում էր 22,3 մարդ, շարժման տարիներին այդ թիվը կրճատվեց գրեթե 2 անգամ:⁴

Լեռնային Ղարաբաղի բնակչության ընդհանուր թվաքանակը յոթանասուն տարիների կտրվածքով՝

Տարիներ	Ընդամենը, հազ. մարդ	Այդ թվում		Բնակչության ընդհանուր թվաքանակը տոկոսներով	
		քաղաքային	գյուղական	քաղաքային	գյուղական
1926	125.3	8.3	117.0	6.6	93.4
1939	150.8	15.9	134.9	10.5	89.5
1959	130.4	27.0	103.4	20.7	79.3
1970	150.3	57.3	93.0	38.1	61.9
1979	162.2	70.1	92.1	43.2	56.8
1989	189.1	97.8	91.3	51.7	48.3

¹ Պողոսյան Գ., Ավագյան Գ., Փախստականների սոցիալական ադապտացիան, Երևան, 1996, էջ. 5-7:

² Ա. Այունց, Հարկադիր տեղաշարժը Ղարաբաղյան հակամարտությունում <http://theanalyticon.com/?p=257>

³ «ԼՂ Հանրապետություն», 02. 04. 1995:

⁴ ԼՂՀ սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշները, 1985-1996, Ստեփանակերտ, 1998, էջ 8:

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ Ադրբեջանի վարած էթնիկ գտումների քաղաքականությունը, ռազմական գործողությունները և սոցիալ-տնտեսական իրավիճակի վաթարացումը մեծ հետք թողեցին բնակչության ընդհանուր թվի և ծննդի մակարդակի, բնակչության տարիքային կազմում տեղի ունեցող տեղաշարժերի վրա: Դա հանգեցրեց սոցիալ-տնտեսական նոր պայմանների վերաճմանն ու վատթարացմանը և բնակչության «ծերացմանը»: Բանն այն է, որ Լեռնային Ղարաբաղի բնակչության զարգացման օրինաչափությունները ձևավորող գործոնների դերը, դրանց բնույթի փոփոխության և մի շարք նոր գործոնների ձևավորման ընթացքը, մասնավորապես շրջափակումները, Արցախի ողջ տարացքում լայնամասշտաբ պատերազմական գործողությունները, տնտեսական ու էներգետիկ ճգնաժամը, անժամանակ մասնավորեցումները, հապշտապ սեփականաշնորհումները և մեծ չափեր ստացած պարտադրված արտագաղթը հանգեցրին բնակչության ընդհանուր թվաքանակի և ծննդի նվազմանը:

Демографическая картина Нагорного Карабаха в свете политического давления Азербайджана (1923-91)

Саркис Асатрян

Резюме

В статье рассматривается картина демографического процесса в НКАО, которая была насильственно объединена с Азербайджанской ССР в период с 1921-1991 гг. Регион был подвержен различным репрессиям со стороны государственной машины Советского Азербайджана, что привело к постоянному сокращению численности населения армян в регионе, ухудшению социально-экономической ситуации, "старения" населения.

Тем не менее, факты и цифры, представленные в статье, еще раз доказывают очевидное преобладание армянского населения на своей исторической родине.

Demographic Picture of Nagorno-Karabakh in the Light of Political Pressure of Azerbaijan (1923-91)

Sargis Asatryan

Summary

The article studies the picture of demographic process in NKAO, which was forcibly united with Azerbaijani SSR in the period of 1921-1991. The region was subject to various repressions by the state machine of soviet Azerbaijan, which brought to constant depopulation of Armenians in the region, worsened the social-economic situation and, resulted in "aging" population.

Nevertheless the facts and figures represented in the article once again prove the evident preponderance of the Armenian population in their historical homeland.